***Գայանե ՔՈՉԱՐՅԱՆ***

# «ԱՐՔՈՒՆԻ ԾԱՌԱԶԱՐԴ ԱՊԱՐԱՆՔԸ» ԵՐՎԱՆԴԱԿԵՐՏԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Հայ պատմագրության մեջ դեռևս բավարար խորությամբ ուսումնասիրված չէ Հայկական լեռնաշխարհի բնապատկերային ճարտարապետությունը /Landschafts architektur/ և նրա՝ որպես տարածության կազմակերպման առանձնահատուկ միջոցի, ձևավորման ակունքը, զարգացման ընթացքն ու ավանդականությունը: Որևէ բնակավայրի բջիջը կազմող «տուն» միավորն ընդգրկում էր - բնակարան, գոմ, ախոռ, փարախ, այգի, բանջարանոց, արտ /բնակավայրին կից/: Տնտեսական անհրաժեշտությամբ թելադրված այս համալիր միավորը, պետականության պայմաններում, ստանում է տերունական մասշտաբ և արքայական արձանագրություններում հնչում գերագույն աստծու կամքով հովանավորված: Հայոց արքայանիստ քաղաքների մասին պատմիչների պերճախոս վկայություններում ուրվագծվում է քաղաքաշինական որոշակի ճաշակ ու ըմբռնում վկայող հուշարձանների շարք:

Խորենացու գեղագիտական հայեցողության պերճախոս դրսևորումներից մեկն է հանդիսանում Երվանդակերտի արքայավայել համայնապատկերի նկարագրությունը, որ հովվերգական հնչողության մի գոհար է պարզապես: «Քաղցր է ինձ ասել և յազագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և չքնաղ յօրինուածովք...սյայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ: Իսկ շուրջ ... ծաղկոցաց և հոտարանաց կազմութիւն, որպես շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգետանեաց՝ խիտ զարտևանանց խիտ և գեղեցիկ ահր. որոյ...յիր կարակնաձև՝ արդարև գեղաւոր կուսից յօնից դարաւսնդաց համեմատ...հարթութիւն դաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն թերանացեալ դարաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն զոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. և արդարև բերրի և թագաւորական դաստակերան»[1]: Կամ՝ «Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելելով ի ներքս այծեմունս երագունս, և եղանց և վեղջերուաց ազգ, և ցխս և վարազս. ...որովք ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց»[2]:

Ապպիանոսն իր հաղորդման մեջ անհամեմատ զուսպ է. «Քաղաքի /Տիգրանակերտի/ արվարձանում նա /Տիգրան Մեծը/ կառուցեց պալատ, ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով:...արքունի պալատը պարսպապատված չէր...»[3]:

«Ապպիանոսի վկայությունը ենթադրել է տալիս պարանեզապուրակային արվեստով մշակված կանաչապատ տարածքների սահմանման մասին՝ ներքին անցուղիներով, ջրամբարներով, հրապարակներով ճարտարապետականորեն ձևավորված: ...մշակված այգիները և «որսատեղերը» իրար հաղորդակից էին»[4]:

Բուզանդի վկայությամբ՝ Խոսրով Կոտակը կաղնետունկ անտառներ հիմնեց՝ «...և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն՝...Դուին,...: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի», որ ուրիշն էլ նրանից հարավ»...և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զերկոտեան անդիսն պարսպեալ փակեցին. ... և ապա ժամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա անդիք որսոց

---

1. *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց /Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի/, Երևան, 1981, II, ԽԲ:*
2. *Նույն տեղում, ԽԱ:*
3. *Appian., Mithr., '84.*
4. *Ա. Զարյան, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Երևան, 1986, էջ 36:*
5. *Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց /Բնագիրը Ք. Պատկանյանի/, Երևան, 1987, III, Ը:*

զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա» : Խորենացին նաև վկայում է, որ Խոսրովը «...զբօսանաց և հատրապքեանց և այլոց որսոց պարսպեալ»[6]:

Առավել ճոխաբյամբ է ներկայանամ Գալիկ Արծրունա քաղաքաշինական բազմարնույթ զործունեությունը, «Յայնժամ և խր իսկ արքայի ամենաիմաստ հատտոր թեամբն հանդերձ բազում արուեստաւորօք զլխը ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել ստ ստորոտով լերինն, որ է գագաթն կղզոյն, զտեղիս զբօսացուցանողս վայելչատրս, ըստ արժանի կայենից արքայական խրոցն հանգստեան ծգելով պարսպանս, յարդարելով գիրողցս և դարս դարաստանաց և գահս ըստ գահից տէրութեանց և բուրաստանս և պարաէզս, բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ եռվխտս. ...»[7]:

Հիշյալ հատվածներամ ակնեայտ են արքայական ըշխանության եզորաքյունն ու վեհությունը ընդգծող, բնապատկերային ճարտարապետության ուշագրավ դրսևորումներ: Այս հանգամանքը դրդում է որոնել հայ իրականության մեջ բնապատկերային ճարտարապետության ձևավորման ակունքը, զարգացման ընթացքն ու ավանդականությանը, բացահայտել արքունի վերնախավի կացութաձևի և նրա գեղագիտական հայեցողության առնչությունները տարածաշրջանում իշխող համահունչ միտումների հետ:

Այժմ փորձենք աղբյուրագիտական և հնագիտական ստկա նյութի համեմատական վերլուծությամբ հետամուտ լինել բնապատկերային ճարտարապետության կարևոր մաս կազմող «արքունի ծառազարդ ապարանքի» մշակույթի զարգացման ընթացքին Հայկական լեռնաշխարհում, խնդրի ճարտարապետական վերլուծության իրավունքն ու պատիվը թողնելով արհեստավարժ մասնագետներին:

Գիտական գրականության մեջ արքայի կամ նրա տեղապահ իշխանափոխի ապարանքի, դրա շուրջ հիմնված ծառազարդ ու ծաղկազարդ, դեկորատիվ արհեստական պուրակի և որսի կենդանիներով լեցուն արգելոցի համալիրի հասկացությունը հայտնի է paradeisos անվամբ: Մասնագետները այս բառը բխեցնում են մեդական *paradaiza բառից[8]: Մեդական տերության քաղաքական եզորության կարճատև ու բուռն ծաղկման շրջանում /մ.թ.ա. 612-550 թթ./ նրա մշակույթը զարգացավ՝ ընդգրկելով Էլամի, Միջագետքի ու Հայկական լեռնաշխարհի քաղաքակրթությունների նվաճումները[9]: Այս խառնածին համադրության մեջ, դեռևս լիովին չյուրացված, բացահայտ ազդեցությունները շոշափելիորեն անհետ մնացին նաև տարածաշրջանում ռազմաքաղաքական առումով Մեդիային փոխարինած և նրա մշակույթի ժառանգորդ Աքեմենյան կայսրության նուշարձաններում: Ռ. Ֆրայը, նշելով հարևան բոլոր շրջանների վրա Վանի թագավորության մշակույթի ու քաղաքակրթության ունեցած մեծ ազդեցության կարևորությունը, գրում է. «Այդ ազդեցության հետքերը /մասնագետները/ բացահայտում են և՛ աքեմենյան արվեստի, ճարտարապետության մեջ, և՛ նույնիսկ Աքեմենյանների տիտղոսավորման բանաձևերի /«արքայից արքա» տիտղոսը բխում է Մեդիայից <Վանի թագավորությունից[10]/ ու արքայական արձանագրությունների ոճի մեջ»[11]:

Գ. Տիրացյանը առարկում է իրանական մշակույթի որոշ նախատիպերը որոնելիս, նախապատվությունը Ասորեստանին տալու ավանդական մոտեցմանը. «Ուրարտական մշակույթի ահսակարար կշիռը, սակայն, անընդհատ աճում է, և նրա ճարտարապետության, շինարարական տեխնիկայի, կիրառական արվեստի, հատկապես մետաղագործության ու խեցեգործության առաջատար նշանակությունը դժվար է այլևս անտեսել»[12]:

---

*6. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, III, Ը:*

*7. Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, IV, Է:*

*8. И. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, стр. 330, Р. Фрай, Наследие Ирана, М., 1971, стр.114.*

*9. Р. Фрай, Наследие Ирана, стр. 113.*

*10. Տե՛ս, օրինակ, Սարդուրու I-ի արձանագրությունը, Սարդուրի II-ի տարեգրությունը. Г.Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960 /այսուհետև՝ УКН/, по 1, по 155.*

*11. Р. Фрай, Наследие Ирана, стр.100, 108.*

*12. Գ. Տիրացյան, Ուրարտական քաղաքակրթությունը և Աքեմենյան Իրանը, Պատմա-բանասիրական հանդես, 1964, 2, էջ 149:*

Հայկական լեռնաշխարհում քաղաքի շրջապատը ծառազարդելու ավանդույթը հաստատված է սեպագիր արձանագրություններով:

«Իշպուինե Սարդուրորդին /և/ Մինուա Իշպուինորդին խաղալուա նոր հիմնեց /ին/, Խալդեին նույնիսկ անտառ նոր հիմնեց /ին/:...ապարանք/*/ նոր հիմնեց/ին/ հաստատեց/ին/ կարգ.-Երբ ծառերը /.../, Խալդեին երեք ոչխար թող զոհաբերեն, երեք ոչխար՝ աստվածներին բոլոր. երբ խաղողը /.../, ...գինին թող գնեն /*/: /Հակառակ դեպքում/ թող իր աչքին /*/ /ու/ դեմքին /*/ կախարդանք լինի»[13]:

«Խալդե տիրոջն իր այս արձանագրությունը Մինուա Իշպուինորդին գրեց: Երբ Խալդյան դարպասները կառուցեց /և/ ամրոց կառուցեց հոյակապ, հաստատեց «Խալդեի քաղաք» անունը: Հիմնեց այս խաղողուտը, հիմնեց անտառ: «Մինուայի խաղողուտ» /է/ անունը:...-երբ խաղողուտը /.../, /մեկ/ եզ /և/ երեք ոչխար Խալդեին թող զոհաբերեն,...»[14]:

«Խալդյան մեծությամբ Արգիշտի Մինուաորդին ասում է.-Ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի Արգիշտիխինիլե անունը:...Գետից չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ /և/ անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ:...»[15]:

«Հողաշերտը կիտեցի /Ռուսա 1-ինը/ լեռան սաղտառում, դաշտը հեղեղեցի, ... դրեցի անունը Ռուսայի ծով: Անցկացրի ջրանցք այնտեղից դեպի Ռուսախինիլե /քաղաքը/, ...: Հիմնեցի հենց այս հովտում խաղողուտ, անտառ, արտ ցորենի»[16]:

«...Ես /Ռուսա 2-րդը/ այս խաղողուտը հիմնեցի, արտ ցորենի, անտառ նոր այնտեղ հիմնեցի, քաղաք նոր այնտեղ կառուցեցի: /Մի/ ջրանցք, Իլդարունիա /գետից/ անցկացրի...»[17]:

Ըստ Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի մ.թ. ա. 714 թ. արշավանքի վավերագրի՝ «Լուվրի սալիկի»[18] կարելի է վերականգնել նրա անխնա ավերածությունների ինքնագոհ, գոռոզամիտ նկարագրությունների տակ թաքնված, Ուլխու քաղաքի համալիրի ընդհանուր պատկերը: Սոսիների ստվերում թաղված արքունի ապարանքով Ուլխու ամրացված քաղաքը տեղադրված էր /Ուրմիա լճից հյուսիս/ Կիշպալ լեռան ստորոտին: Ռուսա Ա-ի կառուցած հորդառատ ջրանցքը ապահովում էր քաղաքի ջրամատակարարումը, ոռոգում «նրա քաղաքի զարդը հանդիսացող մրգատու ծառերի ու խաղողի գեղատեսիլ այգիները», ցորենի արտերը, մարգագետինները: Քաղաքից դուրս, ջրանցքի ափին, փարթամ ծառաստանում «իր հաճույքի համար» նա կառուցել էր բուրմունավետ նոճեփայտ ծածկով արքայական կացարան: Եվ այս բոլորը հսկում ու պաշտպանում էր լեռան վրա Ռուսա Ա-ի կառուցած Սարդուրիխուրդա ամրոցը: «Նրա գեղատեսիլ երկիրը լաջվարդի գույն ուներ, քանզի շրջակայքը պատված էր ծաղկանոցներով ու բուրաստաններով»: Օգտագործելով Խորենացու արտահայտությունը՝ կարող ենք ավարտել. արդարև արքայավայել համայնապատկեր:

Հայկական լեռնաշխարհի քաղաքաշինության ու բնապատկերային ճարտարապետության մասին սեպագիր արձանագրությունների պարունակած տեղեկատվության արձագանքն ու համալրումն ենք տեսնում Վան-Տոսպ քաղաքի կառուցման մասին Խորենացու հաղորդման մեջ. «Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի սպաս ամենայն սլիառայից և յարբուցմունս բուրաստանաց և ծաղկոցաց....: Եւ զամենայն ... կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, գանազանեալք ի պտուղս և ի տերևս. և բազումս բազմաթերս և գիներերս ի նմա անկեաց»[19]:

---

*13. Հ. Կարապետյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին /այսուհետ՝ ՈՒԱ/ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», 1, Երևան, 1981, h.6:*

*14. ՈՒԱ, 12:*

*15. ՈՒԱ, 20:*

*16. ՈՒԱ, 31:*

*17. ՈՒԱ, 36:*

*18. И. Дьянконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории» , 1951, по. 2, надпись по 49 /199/, /213/.*

*19. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, I, ԺԶ:*

Վանի թագավորության արքաների «մեծագործությունների» ցանկում հատկապես կարևորվում է քաղաքաշինությունը, և առանձնահատուկ ընդգծվում քաղաք + ջրանցք + խաղողուտ + անտառ/այգի/ + ապարանք/ամրոց/ =համալիր կառույցի բաղադրիչների միասնությունը, որպես քաղաքաշինական ամբողջություն: Այս ամբողջության առանձին հանգույցների նվիրաբերումը[20], անվանակոչումը[21], զոհաբերությունների պարբերաբարակարգի հաստատումը[22] և այս ամենը անեծքի հուժկու բանաձևերով[23] ամրագրելն ու «պաշտպանագրելը» կազմում են <u>նվիրագործման համընդհանուր համախումբ</u>: Այս համակարգում իր որոշակի տեղն ունի նաև մերձքաղաքային «արքունի ծառազարդ ապարանքը», ամենայն հավանականությամբ, վայրի կենդանիների որսատեղ-արգելոցով հանդերձ: Թեպետ վերջին պարագան սեպագիր աղբյուրներում դեռևս բացահայտված չէ, այսուհանդերձ, Վանի թագավորության և նախորդ շրջանի հանրահայտ բրոնզե գոտիների ու խեցանոթների պատկերագրության մեջ[24] կազմակերպված որսատեղ-արգելոցի ծիեր, ցուլեր հետապնդող, մարտակառքով սլացող արքային ուղեկցում է շքեղ հանդերձավորված հետիոտն ու հեծյալ ջոկատը, ներկա են պառկածներ, ոզնիներ /ճոխ հեսարանների առատությունը և հատկապես էրեբունիի պալատի մեծ դահլիճի /թերևս գահասրահի որմնանկարի[25] արքայական որսի վեհաշուք, հանդիսավոր տեսարանը դրա գոյության առավել քան համոզիչ վկայությունն է, հավաստի ապացույց: Նշված պատկերագրության ողին համահունչ է «Ծննդոց անտառ» արգելոցի մասին Խորենացու տված զուտ, բայց և խոսուն նկարագրին, իսկ հեսարաններն ընկալվում են որպես որսի օրերին թագավորի «ուրախության» դրվագների գեղանկարչական վերարտադրություն:

Ըստ Ա. Լեո Օպենհեյմի[26],Սարգոն Բ-ից /մ.թ.ա. 8-րդ դ./ սկսած աքքայական հետաքրքրությունը պարտեզի նկատմամբ որոշակիորեն փոխվեց գործածականից նպատակայինի: Ծառատեսակների բազմազան նմուշներով այգի ստեղծելու ձգտումը փոխարինվեց այն թագավորի հաճույքի վայր դարձնելու ցանկությամբ: Ասորեստանի արքունի ապարանքին կից տաղավարով պուրակները, նրա կարծիքով, հանդիսանում էին քաղաքից դուրս հիմնվածների փոքրամասշտաբ նմանակումը: Վերջինները հիշատակվում են ambassu օտար բառի հետ: Ambassu -ում պահվում էին որսի համար վայրի կենդանիներ: Այն ծառապատվում էր պտղատու ծառերով, ներմուծված ծիթենիներով ու բուրումնավետ բույսերով: Բուսաբանական այգու և որսատեղի այս բացառիկ համադրումը ընդգրկում էր նաև որոշակի պաշտամունքային, կամ առնվազն ծիսական գործույթություններ[27]:

Այս բոլորից ակնհայտ է, որ վերը մեր նշած քաղաքաշինական համալիր կառույցը անհրաժեշտ ու բավարար էր պետականության ինքնահաստատման շրջանում, սակայն զերտերությունների հզորության աճին համընթաց՝ աճում էր և այդ հզորությունը դրսևորող ճարտարապետական արտահայտչամիջոցների ընդլայնման գեղագիտական պահանջը: Փոխվում էր ընապատկերային ճարտարապետության նկատմամբ մինչ այդ եղած

*20. Տե՛ս, ՈՒԱ, 6./Իշպուինին և Մինուան Խալդիին անառ հիմնեցին/. УКН, 111 (իր դստերը Մինուայի նվիրած "Թարիրիախինելի խաղողուտը"), ՈՒԱՀ 12 /Մինուան հաստատեց «Խալդիի քաղաք» անունը/:*

*21. Տե՛ս, ՈՒԱ, 12 /«Մինուայի խաղողուտ»/. ՈՒԱ, 10 և 11 /«Մինուայի ջրանցք»/. УКН, 167 / «Ասրդուրի /II-ի/ խաղողուտ»/. ՈՒԱ, 20 /«Արգիշթեխինելի քաղաք»/:*

*22. Տե՛ս, ՈՒԱ, 6, 36:*

*23. Տե՛ս, ՈՒԱ, 26, 36: УКН, 167:*

*24. Տե՛ս պատկերագրությունը. Հ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզիդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 115-133: S.A. Esayan, Gurtelbleche der alteren Eisenzeit in Armenien, "Beitrage zur Allgemeinen und Vergleichenden Archaologie" B. 6, 1984, Abb. 12-15, 23, 26. Urartu: A metalworking center in the first millennium B.C.E. /Edited by Rivka Merhav/, Jerusalem, 1991, p. 145-157.*

*25. С. Ходжаш, Н. Труханова, К. Оганесян, Эребуни: памятник урартского зодчества VIII-VI вв. до н. э., М., 1979, стр. 64-65.*

*26. A Leo Oppenheim , On Royal gardens in Mesopotamia, «Journal of Hear Eastern Studies», vol, XXIV, numb. 4, 1965, p. 331-333.*

*27. Նույն տեղում, էջ 333:*

վերաբերմունքը: Այսմ անհրաժեշտ էր ստեղծել արքայավայել «հաճույքի վայրեր» մերձքաղաքային ընդարձակ տարածքներում, ծառազարդ պարտեզներով, ջրավազաններով, սավերախիտ ծառուղիներով, որսատա արգելոցներով: Մշակութային նշանակալից փոխխոխությունների այս շրջանը նախորդեց տարածաշրջանում նախ Մեդիայի կործանումը, ապա և Աքեմենյան Իրանի գերիշխանության շրջանին: Եվ նվաճված երկրների ունեցվածքը, ինչպես միշտ, կուտակվեց կայսրության գանձարանում, իսկ մշակույթն ու քաղաքակրթությունը յուրացվեց, սեփականացվեց: Այդ խառնարանում առեղծվեց նոր որակ, ձևավորվեց նոր ոճ՝ «աքեմենյան կայսերական ոճը» : Այս նույն ժամանակահատվածում, տարածաշրջանի սոցիալ-քաղաքական ընդհանրություններով պայմանավորված, արքունի վերնախավի նույնօրինակ կացութաձևի, հաստատագրված նույնասիպ վարվելակարգի ընդգրկում մթնոլորտը հանդիսացավ այն բարենպաստ նախապայմանը, այն պարարտ միջավայրը, որը կանխորոշեց քաղաքակրթության, ներառյալ և «արքունի ծառազարդ սպարանքի» /paradeisos/ մշակույթի լայն տարածումը աքեմենյան ընդարձակածավալ կայսրության ողջ տիրույթում, ինչպես նաև, նրա հետագա զարգացումը Սելևկյանների օրոք[28]: Հետաքրքրությունների ու իշխող ճաշակի ընդհանրականության պարագայում, Երվանդ Վերջինի քաղաքաշինական գործունեության համար, անշուշտ, նպաստափիր էր, սակայն ընդունենը նպաստավոր: Նրա համար մայրաքաղաքը տեղափոխելու դրդապատճառը, Արմավիրից Երասխի հեռանալու հետևանքով շրջակա միջավայրի բնապահպանական իրավիճակի վատթարացումն էր, իսկ նոր մայրաքաղաքում աշխարհիկ և եռգնոր իշխանությունների տարանջատման անհրաժեշտությունը թելադրված էր ներքին քաղաքական իրավիճակով[29]: Եվ այս տարանջատման իրապաշտական անհրաժեշտությունը ճարտարապետական ձև ու ծավալատարածական լուծում ստացավ «եռաքաղաք համակարգում» /տերմինը ըստ Ա. Զարյանի[30]/: Երվանդ Վերջինը իշխանությունների տարանջատումը /Երվանդաշատ-արքունի և Բագարան-կուռքերի/ երկու բերդաքաղաքների համալրեց «արքայի հաճույքի վայրերով»՝ Երվանդակերտով ու «Ծննդոց անտառ» որսատեղ-արգելոցով: Այս համալրումը, որպես նախագծային միասնական մատեղացում, ակնառու նորաբարություն էր քաղաքաշինության մեջ[31]: Այս ավարտուն գաղափարի համար նախօրինակ հանդիսացան Ռուսա Ա-ի քաղաքաշինական «մեծագործությունները». ա/ Տուշպան՝ /առաջին Երվանդունիների նստավայր Վանը/ լից կառուցված Ռուսախինելե արքունի ամրոցով, արհեստական ջրամբարից բերված ջրանցքով, նորատունկ խաղողուտով, անտառով, ցորենի արտով, բ/ Ուլխու քաղաքը՝ սոսիների սավերում թաղված ապարանքով, քաղաքից դուրս՝ ջրանցքի ափին «փր հաճույքի համար» կառուցած ծառազարդ ապարանքով և սրանց պաշտպանության համար լեռան վրա կառուցած անառիկ բերդով: Ժամանակի ընթացքում հետզհետե լքացված այս երկու համալիրն էլ Երվանդ Վերջինի մատեղացման՝ «եռաքաղաք համակարգի» գաղափարի ծագման հավաստի վկայագրեր են հանդիսանում:

Երվանդ Վերջինի համալիրն իր հետագա զարգացումն ունեցավ Արտաշատում՝ քաղաքի ֆունկցիոնալ տարարաժանման առումով. Տիգրանակերտում՝ ֆունկցիոնալ տարարաժանման[32] և «արքունի ծառազարդ ապարանքի» ու անտառ-արգելոցի համալրությամբ. վաղ միջնադարում գաղափարի ավանդականությունը դրսևորվեց արքունի նստավայր դարձած Դվինին կից խոսրովակերտ ու Տաճար մայրի «տեղիք որսոց զբոսանաց ուրախութեան թագաւորութեան նորա» կաղնեաունկ անտառ-արգելոցներում, իսկ վերածննդի շրջանում՝ Արծրունյաց Ոստան քաղաքի ու Աղթամարի վնեաշուք հոմալիրներում, նոր ենչեղությամբ, ստավել հանդիսավոր և «ռուժ վայելուչ»:

*28. Xenoph., Anab. 1,2,7; 1,4,10. Նույնի, Cyrop. VIII,6, 10; VIII, 6, 12. Նույնի, Oecon. IV, 13, 20, 21, 22. Diod. XIV,80,2, XVI 41,5. Plut., Alc. XXIV, Art. XXV: Demet. L*

*29. Գ. Քոչարյան, Հասարակության քաղաքաեոգեբանական իրադրության դրսևորումը Հայաստանի արքայանիստ քաղաքների համակարգում, «Իրան-նամէ», 6,1996 - 1,1997, էջ 54:*

*30. Ա. Զարյան, նշվ. աշխ., էջ 24:*

*31. Նույն տեղում:*

*32. Գ. Քոչարյան, նշվ. աշխ., էջ 53-54:*

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ «արքունի ծառազարդ ապարանքի» մշակույթի ակունքները հայկական լեռնաշխարհում վկայված են դեռևս մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբներից, և գրավոր աղբյուրներում դիտվում է այդ մշակույթի տեղական զարգացման անընդմեջ ընթացքը /Վանի թագավորություն, Երվանդունիներ, Արտաշիսյաններ, Արշակունիներ, Աբծրունիներ/, և որ հայ ժողովուրդն ունեցել է իր որոշակի ներդրումը այս մշակույթի սաեղծման և տարածման ողջ ընթացքում[33]:

Եվ վերջում, ի լրումն արդեն ասվածի՝ անենք մի կարևոր մեջբերում ևս.

Դավիթ գնաց, տեսավ որ՝
Չորս բոլոր բուրդան ա էանխ.
Ուր մեչ ծառ, ճուղ, բաղ-բաղչա, կանանչ,
Ուր մեչ մեծ հավուզ շինուկ ա,
Ախսրուրի պես մե ջուր կը գըլգըլա, կեքքա:
Զարգեց, դուռ կողրեց, մդավ ներս.
Տեսավ՝ յըմեն ջանավըրուց կապուկ ա՝
Արջուց, գիլուց, աղվխուց, ըսպըաարըկուց,
Յըմեն ջանավըրից կապուկ ա է անխ:
------------------------------
Յինք մըլավ հավուզ լողկըցավ,
Յելավ, ծառներու եով պառկավ, քնավ[34]:

Սա «Սասնա ծռեր» դյուցազնավեպի ռրսասարի նկարագիրն է, ուր ակնեայտ է ժողովրդի երշողությամբ պահպանված պարսպապատ որսատեղ-արգելոցի հիշատակը: Այստեղ առկա է բուսաբանական և կենդանաբանական այգիների համադրությունը՝ համալրված հանգստի ու հաճույքի մասին համար անհրաժեշտ, բնապատկերային ճարտարապետության հատկանշական տարրերով: Մնացվել է մի տարր՝ ապարանքը, որի վերականգնումը կամբողջացնի «արքունի ծառազարդ ապարանքի» պատկերը:

Անկասկած է, որ «Սասնա ծռերի» որսասարը ևս բխում է նույն հեռավոր անցյալից, հայրենի մշակույթի ակունքներից:

# "ЦАРСКИЙ ПАРКОВЫЙ ДВОРЕЦ" ДО И ПОСЛЕ ЕРВАНДАКЕРТА


*Резюме* *Г. Кочарян*

Сравнительным анализом данных археологии и сведений первоисточников /клинописной эпиграфики, текстов античных и раннесредневековых авторов/ прослеживается процесс формирования, развития и распространения одной из ранних форм ландшафтной архитектуры - парадиса на Армянском нагорье и в сопредельных странах /из Месопотамии и Армянского нагорья, через Мидию, в Ахеменидский Иран, с распространением на всей территории империи/. Параллельно с возрастанием мощи супердержав возрастали и эстетические требования к выявляющим эту мощь выразительным


*33. Ժամանակին գերագնահատվել է Աքեմենյանների օրոք paradeisos-ների տարածման փաստը, տե՛ս Г. Тирацян, Культура древней Армении VI в. до н.э. - III в.н.э., Ереван, 1988, стр. 99-100.*

*34. Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ (աշխատասիրությամբ Ս. Հարությունյանի), Երևան, 1977, պատում Դ, 1140, 1150:*

средствам архитектуры. Меняется отношение к ландшафтной архитектуре - от утилитарной функции к целевой, от бытовой необходимости к месту царских развлечений и царской охоты.

В статье выявлена непрерывная последовательность развития садово-парковой архитектуры на Армянском нагорье /Ванское царство, Ервандиды, Арташесиды, Аршакиды, Арцруниды/ и определенный вклад армянского народа в развитие и распространение этой культуры.